

**«ԱՐԴՇԻՆԻՆԿԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆ 2006Թ ՕԳՈՍՏՈՍԻ 26-
Ի ԹԻՎ 201Լ՝ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ**

Ըստ որի խորհուրդը որոշել է՝

1. Սահմանել, որ՝

ա) ցպահանջ և ժամկետային ավանդներ ընդունելու.

բ) առևտրային և սպառողական վարկեր տրամադրելու, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր տալու, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգի իրականացման.

գ) բանկային երաշխիքների և ակրեդիտիվների (վարկային նամակներ) տրամադրման.

դ) արժեթղթեր գնելը (զեղչելը), վաճառելու և սպասարկելու, նման այլ գործառնություններ կատարելու.

ե) ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեության իրականացնելու.

զ) ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ մատուցելու, այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում) կառավարելու.

է) թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ գնելու, վաճառելու և կառավարելու.

ը) ֆինանսական վարձակալություն (լիզինգ) իրականացնելու.

թ) ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն մատուցելու.

ժ) պարտքերի ետ ստացման գործունեություն իրականացնելու

գործարքները, որոնք իրականացվում են «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, այսուհետ՝ «Բանկ» և նրա հետ կապված անձանց հետ, համարվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջի իմաստով հաստատված խորհրդի կողմից, եթե դրանք բավարարում են սույն որոշման մեջ նշված պահանջները:

2. Սահմանել, որ՝

ա) բանկային հաշիվներ բացելու և վարելու.

բ) այլ վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու և (կամ) այլ կերպ հաճախորդների հաշիվները սպասարկելու.

գ) արտարժույթ գնելու և վաճառելու (փոխանակելու), այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ կնքելու.

դ) թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ ի պահ ընդունելու

գործարքները, որոնք իրականացվում են Բանկի և նրա հետ կապված անձանց հետ, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջի իմաստով ենթակա չեն հաստատման և հաշվառման խորհրդի կողմից:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքները ենթակա են հաշվառման Բանկի խորհրդի կողմից:

4. Սույն որոշման հիման վրա Բանկի և նրա հետ կապված անձանց հետ ցպահանջ և ժամկետային ավանդներ ընդունելու գործարքի կնքումը չի պահանջում Բանկի խորհրդի կողմից հաստատում, եթե տվյալ գործարքը համապատասխանում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին կարգերին համապատասխան ընդունված ընթացակարգերին և կոնկրետ այն պայմաններին (Ավանդի գումար, տոկոսադրույքներ, ժամկետներ, արժույթ և այլ էական պայմաններ), որոնք հրապարակվել են և գործում են բոլոր հաճախորդների համար:

5. Այն դեպքերում, երբ Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին կարգերին համապատասխան ընդունված պայմանները կրում են պայմանագրային բնույթ, ապա նմանատիպ գործարքներն ենթակա են հաստատման և հաշվառման Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի վարչության նախագահի ներկայացմամբ, և որոնք ուժի մեջ են մտնում Բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

6. Սույն որոշման 5-րդ կետի կատարումն իրականացվում է հետևյալ կերպ.

6.1. մինչև Բանկում ցպահանջ և ժամկետային ավանդ ներդնելը, Բանկի հետ կապված անձը գրավոր դիմում է Բանկի վարչության նախագահին՝ ավանդային գործարքը կնքելու նպատակով Բանկի խորհրդի թույլտվությունը ստանալու համար: Գրության մեջ նշվում են ավանդի գումարը, տեսակը, արժույթը, տոկոսը, ժամկետը, տոկոսների վճարման հաճախականությունը:

6.2. Եթե Բանկի խորհուրդը համաձայնություն է տալիս առաջարկվող պայմաններով ավանդային գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ կնքվում է բանկային ավանդի պայմանագիր, իսկ գործարքը համարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջի իմաստով հաստատված Բանկի խորհրդի կողմից:

6.3. Եթե Բանկի խորհուրդը համաձայնություն չի տալիս առաջարկվող պայմաններով ավանդային գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ ավանդային գործարքը մերժվում է և այդ մասին Բանկի վարչության նախագահը տեղեկացնում է Բանկի հետ կապված անձին:

7. Սույն որոշման հիման վրա Բանկի և նրա հետ կապված ղեկավար անձանց վարկեր տրամադրելու գործարքի կնքումը չի պահանջում Բանկի խորհրդի կողմից հաստատում, եթե տվյալ գործարքը համապատասխանում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին կարգերին համապատասխան ընդունված Աշխատակիցների աշխատավարձով ապահովված վարկերի պայմաններին (վարկի գումար, տոկոսադրույքներ, ժամկետներ, արժույթ և այլ էական պայմաններ) և ընթացակարգերին:

8. Սույն որոշման հիման վրա Բանկի և նրա հետ կապված անձանց ավանդի, հաշվի սառեցված մնացորդի ապահովվածություն ունեցող վարկեր տրամադրելու գործարքի կնքումը չի պահանջում Բանկի խորհրդի կողմից հաստատում, եթե տվյալ գործարքը համապատասխանում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին համապատասխան ընդունված վարկերի պայմաններին և ընթացակարգերին և վարկի գումարը չի գերազանցում ավանդի գումարի, հաշվի սառեցված մնացորդի 95 տոկոսը, տրամադրվում է տարեկան ոչ պակաս 12 տոկոս դրույքաչափով, վարկի վերադարձման ժամկետը սահմանվում է համապատասխան վարկային պայմանագրով, վարկային պարտավորությունների կատարումն ապահովված է ՀՀ դրամով, SDR զանբյուրի մեջ մտնող արտարժույթներով, ինչպես նաև այլ արտարժույթային միջոցներով՝ եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված վարկի ապահովվում:

(8-րդ կետը փոփ. Բանկի խորհրդի 30.09.2006թ. թիվ 242L և 24.09.2007թ. թիվ 243 L որոշումներով)

9. Բանկի և նրա հետ կապված անձանց վարկեր տրամադրելու յուրաքանչյուր գործարքի կնքումը ենթակա է հաստատման Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի վարչության ներկայացմամբ, քանի դեռ Բանկի խորհուրդը այլ վարկային գործարքների համար չի սահմանել պահանջներ՝ թույլատրելի սահմանաչափեր, ժամկետներ, տոկոսադրույքներ, վարկունակության աստիճան, ապահովվածություն, ընդունելի ռիսկի աստիճան:

10. Սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերով չնախատեսված այլ վարկային գործարքների համար խորհրդի կողմից համապատասխան կանոնակարգեր հաստատելու և իր կամ վարչության կողմից պահանջներ սահմանելու (թույլատրելի սահմանաչափեր, ժամկետներ, տոկոսադրույքներ, վարկունակության աստիճան, ապահովվածություն, ընդունելի ռիսկի աստիճան և այլ էական պայմաններ) պահից Բանկի և նրա հետ կապված անձանց այդպիսի վարկեր տրամադրելու գործարքների կնքումը չի պահանջում Բանկի խորհրդի կողմից հաստատում, եթե դրանք համապատասխանում են հաստատված կարգերին և սահմանված պահանջներին:

(10-րդ կետը լրաց. Բանկի խորհրդի 30.09.2006թ. թիվ 242L որոշմամբ)

11. Սույն որոշման 9-րդ կետի կատարումն իրականացվում է հետևյալ կերպ.

11.1. Բանկի հետ կապված անձը գրավոր դիմում է Բանկի վարչության նախագահին՝ վարկային գործարքը կնքելու նպատակով Բանկի խորհրդի թույլտվությունը ստանալու համար: Գրության մեջ նշվում են վարկի գումարը, ժամկետը, արժույթը, տոկոսը, ժամկետը, տոկոսների վճարման հաճախականությունը, ապահովվածությունը, եկամուտների աղբյուրները և այլն:

11.2. Եթե Բանկի խորհուրդը համաձայնություն է տալիս առաջարկվող պայմաններով վարկային գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ կնքվում է վարկային պայմանագիր, իսկ գործարքը համարվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջի իմաստով հաստատված Բանկի խորհրդի կողմից:

11.3. Եթե Բանկի խորհուրդը համաձայնություն չի տալիս առաջարկվող պայմաններով վարկային գործարքի կնքմանը, ապա Բանկի հետ կապված անձի հետ վարկային գործարքը մերժվում է և այդ մասին Բանկի Վարչության նախագահը տեղեկացնում է Բանկի հետ կապված անձին:

12. Սահմանել, որ Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, գին, տոկոսներ, ժամկետ և այլն) նախատեսել, քան Բանկի աշխատակից չհամարվող այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց հետ կնքված նույնանման գործարքները:

13. Սույն որոշման 1-ին կետում նշված բոլոր գործարքները ենթակա են հաշվառման Բանկի վարչության նախագահի աշխատակազմի ղեկավարի կողմից՝ գործարքն իրականացրած ստորաբաժանումների ներկայացրած տեղեկությունների հիման վրա:

14. Բանկի վարչության նախագահի աշխատակազմի ղեկավարի կողմից յուրաքանչյուր եռամսյակ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, Բանկի խորհրդին ներկայացվում է տեղեկատվություն (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) տվյալ եռամսյակի ընթացքում Բանկի հետ կապված անձանց հետ կնքված բոլոր գործարքների մասին:

15. Բանկի հետ կապված անձանց հետ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքներ կնքելիս Բանկի ներքին իրավական ակտերի և սույն որոշման միջև հակասություններ առաջանալու դեպքում, գործում են սույն որոշմամբ սահմանված դրույթները:

16. Սույն որոշման պահանջները կիրառվում են սույն որոշման ընդունումից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: